РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ВЕРИН - ДВИНСКАЯ СРЕДНЯЯ ШКОЛА АРАРАТСКОГО МАРЗА

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ« ՎԵՐԻՆ ԴՎԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA ARARAT REGION SCHOOL OF VERIN DVIN VILLAGE

Արարատի մարզ գ. Վ.Դվինի միջն. դպրոց E-mail:v erindvin@schools.am

Թիվ 135

13 .04 .2023թ .

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգարժան տիկին Հակոբյան

Հայտնում եմ Ձեզ, որ Արարատի մարզի «Վերին Դվինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ- ի ռուսերենով ուսուցմամբ ֆիզիկայի /7 դասաժամ/ , աշխարհագրության / 12 դասաժամ/ , մաթեմատիկայի /19 դասաժամ / ուսուցչի թափուր տեղերի համար մրցույթը տեղի կունենա ապրիլի 28- ին ժամը՝ 14.00 :

Դպրոցի տնօրեն / Ա. Մ. Շախոնա /

Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Վերին Դվինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսական դասարանների ֆիզիկայի (7 դասաժամ), աշխարհագրության (12 դասաժամ) , մաթեմատիկայի(19 դասաժամ), , ինֆորմատիկա (6 դասաժամ)

ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- դիմում (ձև 1),

- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են ապրիլի 12-ից մինչև ապրիլի 26-ը ներառյալ, ամեն օր ՝ ժամը 10.00-ից 15.00-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ապրիլի 28-ին ՝ ժամը 14.00-ին ՀՀ Արարատի մարզի Վերին Դվինի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 098582671 հեռախոսահամարով: